ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

I

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-37

Լևոն Մկրտչյան
ՇՀՀԿ/ՊԱԹՊՄՊՖԾ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Խնդրո առարկա գոտին զբաղեցնում է ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերի միջև ձգվող ժայռոտ բլրակներով տարածքը: Հուշարձաններով հարուստ այս հատվածը միշտ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, որտեղ հետազոտվել են մ.թ.ա. 3-րդ–1-ին հազ. վերաբերող բազմաթիվ հուշարձաններ: Այս ժամանակաշրջանի հնագիտական միջավայրը ձևավորող դամբանաբլուրների և քարաշարերով առանձնացված դամբարանադաշտերի հետ կան նաև աշտարակատիպ կառույցներ, որոնք առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել: Այս կառույցները առանձին՝ իրար հետ տեսողական, հաճախ նաև քարաշարերով կապված համալիրներ են, որոնք հուշարձանների պետական ցանկերում հանիրավի վկայագրվել են որպես «դիտակետ-աշտարակներ»: Աշտարակների մոնումենտալությունը (կառուցված են խոշոր կոպտատաշ քարերով), դիրքը (բլրի գագաթ), հնագիտական համատեքստը (դամբարանային միջավայր) ավելի շատ փաստում են դրանց ծիսապաշտամունքային նշանակության մասին: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ աշտարակները ճարտարապետատեխնիկական մանրամասնություններով նման են բրոնզեդարյան քարե զրահով դամբանաբլուրներին: Հետևաբար այս հուշարձանները կարող են դառնալ հին Հայաստանի վաղագույն ճարտարապետության և աշխարհայացքային խնդիրները հասկանալու կարևոր սկզբնաղբյուրներ: Աշտարակների նորագույն ուսումնասիրությամբ, որը կատարվեց ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ (օդալուսանկարահանման միջոցով), պարզ դարձավ, որ Արարատյան դաշտի հյուսիսային եզերքով ձգվող աշտարակների շարքը մի ընդհանուր համակարգի մաս է՝ օրգանապես կապված այս հատվածի սրբազան լանդշաֆտի այլ բաղադրատարրերին: Այստեղի աշտարակները միաշար, բոլորավուն հիմքով և կտրվածքում հատած կոնի տեսք ունեցող կառույցներ են, որոնք փոխվում են դեպի հյուսիս՝ Արագածի ավելի բարձրադիր լանջերի հավաստված օրինակներում:

Հիմնաբառեր՝ Արագած, Արարատյան դաշտ, սրբազան լանդշաֆտ, մեգալիթ, աշտարակ, ծես, դամբարան, դամբարանադաշտ:

Ներածական

Արարատյան դաշտի հյուսիսային հատվածները, որոնք անջրդի առապարներով տարածքներ են և ժողովրդի մեջ առավել տարածված են «ղոռեր» անվամբ, հարուստ են հնագիտական կառույցների մնացորդներով: Դաշտի գրեթե ողջ աղեղնագիծը «մշակութացված» է: Ի թիվս այլ հուշարձանների, այս գոտում առ այսօր վկայված են 31 բոլորաձև աշտարակներ[1], որոնց տարածման տիրույթը հիմնականում համընկնում է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի ենթաշրջանի հյուսիսային գյուղերի և Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղի

[1] Հայաստանի աշտարակատիպ կառույցների մասին տես Մկրտչյան 2017ա, 298–317; Մկրտչյան 2018, 69–77; Մկրտչյան 2018ա, 357–365:

վարչական տարածքներին [նկ. 1]: Աշտարակները գտնվում են սկսած ծ.մ. մոտ 900 մ բարձրությունից [նկ. 2, 3], իսկ դրանց սփռման աղեղնագծի երկարությունը մոտ 40 կմ է՝ սկսած Հայթաղից մինչև Մերձավան 1 աշտարակը:

Այս գոտու աշտարակների ուսումնասիրության պատմությունը պայմանականորեն կարելի բաժանել մի քանի փուլերի.

ա. Հուշարձանների առաջին ուսումնասիրողներ Թ. Թորամանյանը և Ա. Քալանթարը 1920-ական թվականներին Աղավնատան «օյուղի» (Աղավնատուն 1) ու Դաշտ գյուղի մոտ գտնվող Արդար Դավիթ աշտարակների քննությամբ դրանք համարեցին պաշտամունքային շինություններ[2]:

բ. Քալանթարի տեսակետը քննադատեց Խ. Սամվելյանը և Արդար Դավիթը համարեց ամրոց[3]:

գ. Հետագայում այս հուշարձանները 1980–1991 թթ. վկայագրվեցին հիմնականում որպես «դիտակետ-աշտարակներ»[4]:

դ. Սակայն 1963 թ. (Գ. Տիրացյան)[5], ապա՝ 2012 թ. (Ֆ. Մուրադյան)[6] Մերձավան 1 (նախկինում՝ Փարաքար) աշտարակի պեղումները, ինչպես նաև 2016–2019 թթ. այստեղ աշտարակների և նրանց դամբարանային համատեքստի մեր համալիր ուսումնասիրությունը կրկին թույլ տվեցին խոսել այս հուշարձանների պաշտամունքային գործառույթների մասին:

Ուսումնասիրության թիրախում էին հետևյալ խնդիրները.

ա. Աշտարակների նույնականացում՝ գրականությունից և արխիվներից քաղած բոլոր տվյալների համադրումը դաշտային ուսումնասիրության արդյունքների հետ:

բ. Տվյալների բազայի ստեղծում և գոտու քարտեզագրում՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգով (GIS):

գ. Քննվող օբյեկտների օդալուսանկարում, լուսանկարների հիմքի վրա աշտարակների օրտոֆոտոպլանների և տեղահանույթների կազմում:

Աշտարակների նկարագրությունը

Աշտարակները հատակագծում ունեն համակենտրոն շրջաններ, իսկ կտրվածքում հիշեցնում են հատած կոն [նկ. 4]: Կառույցները հիմնականում զուրկ են մուտքերից, բացի Աղավնատուն 1-ից, չունեն ծածկ, իսկ խուցը ծածկված է քարերով, երևացող հատակը՝ զուրկ հողաշերտից: Աշտարակները կառուցվել են խոշոր կոպտատաշ բազալտի քարերով, որոնք ըստ շարվածքի լինում են երկայնական և լայնակի: Երկայնական տեխնիկայով են շարված

[2] Թորամանյան 1948, 218–219; Քալանթար 2007, 202–203:

[3] Սամվելյան 1931, 142–148:

[4] Վկայագրումները կատարվել են ՀՍՍՀ մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության՝ հուշարձանների համահավաքի պասպորտավորման բաժնի կողմից, տե՛ս Մկրտչյան 2018 բ, 110–111:

[5] Տիրացյան 1970, 229–231:

[6] Մուրադյան 2012, 172–174:

Լեռնամերձ 2, Արագածոտն 1 աշտարակները [նկ. 5]: Սրանք շարված են խոշոր քարաբեկորներով (150 × 90 սմ) և ներսի հատվածում թեթևակի կորանում են: Այս աշտարակների ներսի և դրսի թափված քարերի քանակությունից կարելի է ենթադրել, որ կառույցները շատ բարձր չեն եղել՝ առավելագույնը 2 մ: Շարվածքից կարելի է ենթադրել, որ սրանք ունեցել են գլանաձև իրան: Լայնակի շարով աշտարակները (Այգեշատ 2) կառուցված են միջին մեծության քարաբեկորներով: Պարսպաշարը, դեպի վեր բարձրանալով, հավանաբար եղել է կոնաձև: Ներսի և դրսի թափված քարերով նախնական բարձրությունը դժվար է որոշել, թեպետ ամենալավ պահպանվածը Աղավնատուն 1 (Օյուղ) աշտարակն է, որն ունեցել է ավելի քան 8 մ բարձրություն [նկ. 6]:

Հավաստված աշտարակները հանդիպում են ինչպես առանձին, այնպես էլ խմբերով: Առանձին գտնվող աշտարակները աչքի են ընկնում մոնումենտալությամբ (տեսանելի են բոլոր կողմերից, կառուցման կատարելությամբ (ընտրված շինանյութի և բնական քարաժայռի համադրությամբ) և խոշոր չափերով (Արշալույս 1՝ 10 մ, Ուլատիտիկ՝ 11 մ [նկ. 7,8] տրամագծերով): Այս աշտարակների համար նախապես պատրաստում էին քարային հարթակ (Արդար Դավիթ՝ մոտ 30 մ [նկ. 4], Մերձավան 1՝ 12 մ տրամագծերով)՝ շրջապատված կրոմլեխով: Հարթակը, կրկին օղակված կրոմլեխով, համակենտրոնության սկզբունքով նեղանալով բարձրանում էր (մինչև մեկ և ավելի մետր, Արդար Դավիթ, Մերձավան 1)՝ դառնում երկօղականի, որի ամենավերին մասում գտնվում էր բոլորաձև աշտարակը:

Այս աշտարակների շուրջը բնակավայրերի հետքեր հիմնականում չեն նկատվում, դրանց մոտ կան դամբարանադաշտերի կուտակումներ, օրինակ՝ Մերձավանում հավաստված են բազմաթիվ միջին բրոնզեդարյան թաղումներ, Արդար Դավիթի անմիջապես հյուսիսային մասում թալանված խուց է: Հետաքրքիր է նաև Արդար Դավթի խցից հայտնաբերված 114 × 35 × 19 սմ չափերով կուռքը [նկ. 9]:

Աշտարակները կարող են լինել նաև խմբերով՝ կառուցված Արագածից իջնող լեռնաշղթաների վրա (մինչև 4 կառույց), իրարից մինչև 1 կմ հեռավորությամբ: Այսպիսին են Ոսկեհատի և Արագածի 4 աշտարակները: Որոշ դեպքերում աշտարակները գտնվում են նույն բլրի կամ բարձրադիր հարթության վրա՝ ինչպես Արագած 2, 3, Այգեշատ 1, 2, Նորակերտ 1, 2, 3: Վերջին երկուսը կապվում են նաև քարաշարերով: Արագած 2 աշտարակը ունի 33 մ տրամագիծ: Երևում են կրոմլեխի և շառավղաձև պատերի հետքերը: Այստեղ աշտարակի համար նույնպես կառուցվել էր քարահողային լիցքով հարթակ, սակայն մի օղակով՝ թմբաձև, որի բարձրությունը 0,30–0,70 մ է, իսկ լայնությունը՝ 2,5–5 մ (Արագած 1):

Հայաստանի համակենտրոն շրջանակներով կառույցներն ու աշտարակները

Համակենտրոն շրջանակով կառույցները Հայաստանում ունեն խորը արմատներ: Հնագույնները թվագրվում են մ.թ.ա. 3-րդ հազ.: Սրանք թեպետ չեն դասվում մեգալիթյան կառույցների շարքը, սակայն բոլորն էլ փաստագրվել են որպես ծիսական բնույթի կառույցներ: Այդպիսին է Բջնիի դամբարանադաշտի մոնումենտալ կառույցը (հրապարակումներում՝ №2 դամբարան), որը եռամաս ներքին բաժանումով և աստիճանաբար վեր բարձրացող հարթակ է[7]: Թեպետ Ձրահովտի տաճարական համալիրը հում աղյուսով է կառուցված, սակայն այն նույնպես ուներ համակենտրոնություն: Սրա կենտրոնում մոտ 3 մ տրամագծով աղյուսակերտ սյունանման աշտարակն է, գագաթին՝ կլոր շարժական օջախ[8]:

Շառավղաձև պատերով կառույց է հիշատակվում նաև Քարվաճառի տարածաշրջանում (Արցախի Հանրապետություն, Տրտու գետի ձախ վտակի վրա)՝ Ալի բայրամլի բրոնզեդարյան բնակավայրում[9]:

Համակենտրոն և ճառագայթաձև կառույցներ հավաստանշվել են նաև դամբարաններում: Ճառագայթաձև դասավորություն ունեին Ներքին Բազմաբերդի[10] և Լճաշենի №55 (24–22-րդ դդ.) դամբարանների ծածկասալերը[11]: Իսկ Արթիկի №422 դամբարանից հայտնաբերված գլանաձև կնիքին փորագրված են դեպի կենաց ծառը շարժվող զույգ թևատարած թռչուններ՝ գլխավերևում լուսատուի կամ երկնային ինչ-որ մարմնի՝ համակենտրոն զույգ շրջանագծերի նման խորհրդանշանով[12]: Հատկանշական է, որ համակենտրոն շրջանագծերով լուսատուի առկայությունը, ըստ Ա. Փիլիպոսյանի, կնիքի սյուժեին առասպելաբանական համատեքստ է տալիս[13]:

Համակենտրոն շրջաններ և ճառագայթաձև պատկերներ կան նաև ժայռապատկերներում, ինչպես Վարդենիսի լեռների ժայռապատկերներից մեկում, որտեղ, ըստ Հ. Մարտիրոսյանի, «արևի մեծ սկավառակ» է[14]: Նման հորինվածք է պատկերված Կոբուստանի մի ժայռապատկերի վրա[15]:

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի բրոնզ-երկաթ ժամանակաշրջանների մեգալիթյան աշտարակատիպ կառույցներին բնորոշ է համակենտրոն կառուցվածքը, որոնց կենտրոնական մասից հաճախ շառավղաձև քարաշարեր են իջնում դեպի օղակող հատվածներ: Արդար Դավթի աշտարակի կենտրոնից հաշ-

7 Ղարիբյան և այլք 2007, 71:

8 Խանզադյան 2017, 13–14; Խանզադյան 1990, 11–12:

9 Ибрагимов 1986, 25–26.

10 Արեշյան և այլք 1979, 222:

11 Պետրոսյան 2013, 218:

12 Хачатрян 1975, 157–158; Хачатрян 1979, 78, 296–297:

13 Փիլիպոսյան 2018, 121:

14 Մարտիրոսյան, Իսրայելյան 1971, 20:

15 Ахундов 1986, 80; Ибрагимов 1986, 25–26.

ված մոտ 15 մ շառավիղ է[16]: Նման շառավղաձև լավ պահպանված պատեր առկա են նաև Արագածի հարավային լանջերի այլ աշտարակներում, ինչպես օրինակ Պարտիզակ 1 նորահայտ աշտարակը [նկ. 10]:

Բացի արհեստական հարթակով աշտարակներից, կան նաև առանձին հարթակներ, որոնց կենտրոնում աշտարակ հիշեցնող փոքրիկ կերտվածքներ են: Էջմիածնի տարածաշրջանի Շահումյանի (Շրեշ բլուրի) դամբարանադաշտում այդպիսի համակենտրոն հարթակներ են №1 և 2 կառույցները, որոնց կենտրոնում պայտաձև (№1) և ուղղանկյուն (№2) հատակագծով փոքրիկ շինության հետքեր են, նկատելի են շառավղաձև պատեր[17]:

Վերջաբան

Մերձավան 1 աշտարակի պեղումները և աշտարակների հնագիտական համատեքստի ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ են տալիս նորից անդրադառնալու Ա. Քալանթարի և Թ. Թորամանյանի այն տեսակետին, որ դրանք ծիսապաշտամունքային կառույցներ են: Ընդհանուր միջավայրը, տեսողական կապը և միմյանց հետ քարաշարերով միացումը խոսում են մեկ միասնական համակարգի՝ «սրբազան լանդշաֆտի» առկայության մասին: Այս համակարգը իր հերթին կազմված է ավելի փոքր միավորներից, աշտարակներից կամ դրանց խմբերից, որոնք հստակ զատված են բնակավայրերից և գտնվում են որոշ հեռավորության վրա:

Այսպիսով, Արարատյան դաշտի եզրային հատվածների ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզաբանելու Արագածի հարավահայաց լանջերի ամենացածրադիր հատվածի լանդշաֆտի մշակութայնացման խնդիրները, ինչպես նաև դաշտային և նախալեռնային հատվածների հնամշակութային փոխհարաբերությունները:

Գրականության ցանկ

ԱՐԵՇՅԱՆ և այլք 1979
Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ., Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները // Բանբեր Երևանի համալսարանի, 1979, №2, 205–223:

ԳՆՈՒՆԻ և այլք 2017
Գնունի Ա., Թադևոսյան Ա., Մկրտչյան Լ., Շրեշ բլուր // «Մեծամորյան ընթերցումներ» I (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ՊՈԱԿ, 2017, 25–38:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 1991
Խանզադյան Է., Ջրահովտի պեղումների արդյունքները // ՀՀ-ում 89–90 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (խմբ. Գ. Տիրացյան), Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, 11–12:

16 Մկրտչյան 2017, 111–116:

17 Գնունի և այլք 2017, 30–31:

ԽԱՆԶԱԴՅԱՆ 2017
Խանզադյան Է., Ջրահովիտ // Հայաստանի հնագույն մշակույթը 3, Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (խմբ. Ա. Քալանթարյան, Ռ. Բաղալյան), Երևան, «Մուղնի», 2017, 13–14:

ՂԱՐԻԲՅԱՆ և այլք 2007
Ղարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանեսովա Տ., Բջնիի հուշարձանները // Հուշարձան տարեգիրք, Երևան, «Հուշարձան», 2007, 67–83:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ և այլք 1971
Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., , Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները 6, պրակ II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:

ՄԿՐՏՉՅԱՆ 2017
Մկրտչյան Լ., «Արդար Դավիթ». Առասպել և իրականություն // «Էջմիածին», 2017, Է, 111–116:

ՄԿՐՏՉՅԱՆ 2017 ա
Մկրտչյան Լ., Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան աշտարակատիպ կառույցները // «Մեծամորյան ընթերցումներ-1» (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ՊՈԱԿ, 2017, 298–317:

ՄԿՐՏՉՅԱՆ 2018
Մկրտչյան Լ., Նորահայտ աշտարակատիպ կառույցներ Արագածոտնի մարզում // Արագածի թիկունքում, Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», 2018, 69–77:

ՄԿՐՏՉՅԱՆ 2018 ա
Մկրտչյան Լ., Հայաստանի աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությունից // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2018, № 3, 357–365:

ՄԿՐՏՉՅԱՆ 2018 բ
Մկրտչյան Լ., Հայաստանի Հանրապետության տարածքի աշտարակատիպ հուշարձանների հաշվառումը և բնութագիրը // Հայագիտության հարցեր, 2018, № 3, 108–119:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2012
Մուրադյան Ֆ., Արմավիրի մարզի Մերձավան գյուղի տարածքում իրականացրած պեղումների հաշվետվություն (անտիպ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2012, № 2, 215–233:

ՍԱՄՎԵԼՅԱՆ 1931
Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, Պետական հրատ., 1931:

ՏԻՐԱՑՅԱՆ 1970
Տիրացյան Գ., Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում // Բանբեր Երևանի համալսարանի, 1970, № 1, 229–231:

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ 2018
Փիլիպոսյան Ա., Տեսարանային հորինվածքներով հինմերձավորարևելյան և միջերկրածովյան գլանաձև կնիքներն ու դրանց արթիկյան զուգահեռները // Արագածի թիկունքում, Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին (խմբ. Հ. Ավետիսյան), Երևան, «Գիտություն», 2018, 114–126:

ՔԱԼԱՆԹԱՐ 2007
Քալանթար Ա., Հայաստան. քարե դարից միջնադար, Երևան, «Գիտություն», 2007:

АХУНДОВ 1986
Ахундов Д. А., Архитектура древного и раннесредневекового Азербайджана, Баку, Азербайджанское гос. изд-во, 1986.

ИБРАГИМОВ 1986
Ибрагимов Н. С., К вопросу освоения высокогорных зон Азербайджана (на основе данных Келбаджарского высокогорья) // Археологическая и этнографические изыскания в Азербайджане 1985 году, Баку, «Элм», 1986.

ХАЧАТРЯН 1975
Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, Изд. Ереванского гос. университета, 1975.

ХАЧАТРЯН 1979
Хачатрян Т., Артикский некрополь, Ереван, Изд. Ереванского гос. университета, 1979.

Levon A. Mkrtchyan
Shirak Center for Armenological Studies
Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations

TOWER-SHAPED STRUCTURES BORDERING THE NORTHERN FRINGES OF THE ARARAT PLAIN

Keywords: Aragats, Aragats valley, sacred landscape, megaliths, tower, cult, burial, tomb field.

More than fifty megalithic towers have been identified in the studied area to date. The manifestation of their individual types, forms and other features, as well as their distribution area coincides with the natural landscape zone of this part.

The discussed area is a low-mountainous and dry zone of Mount Aragats (900–1200 m), part of the Aragatsotn plateau. The territory almost has no water sources and few remains of settlements, which make it resemble a "dead zone" with numerous tombs, where visible areas are separated by stone rows with towers and platforms standing in the center. Small settlements are located in their vicinity, in the lower plane (Voskehat, Haytagh, Arshaluys), are also distinguished from these complexes by the stone rows. There are exceptionally rounded towers here on the hills, located at a distance of 3–5 km from each other. The towers were first documented exactly in this area in the 1920s, when the Committee for the Protection of Monuments began to study the structures of the southern part of Aragats. Basing on the data of Aghavnadzor-1 and “Ardar David” (“Fair David”) towers, T. Toramanyan and A. Kalantar tried to document and then identify the towers as a new type of monument. Noteworthy that at first both towers were considered places of worship, but later these monuments were identified as "watchtowers" and classified as defensive structures.

Since 2013, a new stage in the study of towers has begun. The first step was to collect all archival information about the monuments (about 70 documents), 20 of which were related to the area of our interest. After that, in the course of field work, the structures mentioned in the documents were identified and their location was established. Using the capabilities of modern technologies, with the help

of aerial photography, we managed to identify 31 monuments. Orthophotomaps, elevation and topographic maps were made on the basis of the obtained base images.

Левон Альбертович Мкртчян

Ширакский центр арменоведческих исследований

Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников

БАШНЕОБРАЗНЫЕ СООРУЖЕНИЯ, ОКАЙМЛЯЮЩИЕ С СЕВЕРА АРАРАТСКУЮ ДОЛИНУ

Ключевые слова: Арагац, Араратская долина, сакральный ландшафт, мегалиты, башня, культ, погребение, могильник.

На исследуемой территории на сегодняшний день выявлено более пяти десятков мегалитических башен. Проявление их отдельных видов, форм и других особенностей, а также ареал их распространения совпадает с естественной ландшафтной зоной этой части. Обсуждаемый участок представляет собой низкогорную и сухую зону горы Арагац (900–1200 м), часть Арагацотнского плато. На территории мало источников воды и редкие остатки поселений, чем она напоминает «мертвую зону» с большим количеством гробниц, где видимые участки разделены каменными рядами со стоящими в центре башнями и платформами. Небольшие поселения расположены по соседству с ними, в нижней плоскости (Воскеат, Айтах, Аршалуйс), и также отличаются от этих комплексов каменными рядами. Здесь на холмах, на расстоянии 3–5 км друг от друга расположены исключительно округлые башни. Впервые башни были задокументированы именно в этом районе в 1920-х годах, когда Комитет по охране памятников начал изучать сооружения южной части Арагаца. На основе данных башен Агавнадзор-1 и Ардар-Давид («Справедливый Давид») Т. Тораманян и А. Калантар попытались задокументировать, а затем идентифицировать башни как новый вид памятников. Примечательно, что сначала обе башни считали культовыми сооружениями, но позже эти памятники были определены как «сторожевые башни» и отнесены к сооружениям оборонительного назначения.

С 2013 года начался новый этап изучения башен. Первым шагом был сбор всей архивной информации о памятниках (около 70 документов), 20 документов из которых были связаны с интересующей нас территорией. После этого, в ходе полевых работ были идентифицированы сооружения, упоминаемые в документах, и установлено их местоположение. Используя возможности современных технологий (при помощи аэрофотосъемки) нами был выявлен 31 памятник. Ортофотопланы, карты высот и топографические карты были сделаны на основе полученных базовых изображений.

Ներկայացվել է՝ 02.07.2022,
գրախոսվել է՝ 15.07.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:



Նկ. 1. Աշտարակների տարածման քարտեզը (կազմող՝ Լ. Մկրտչյան)

1. *Մերձավան*
2. *Նորակերտ 2*
3. *Նորակերտ 3*
4. *Ուլպիտիկ*
5. *Արդար Դավիթ*
6. *Այգեշատ 1*
7. *Այգեշատ 2*
8. *Լեռնամերձ 1*
9. *Լեռնամերձ 2*
10. *Ոսկեհատ 1*
11. *Ոսկեհատ 2*
12. *Ոսկեհատ 3*
13. *Ոսկեհատ 4*
14. *Աղափնատուն 1*
15. *Արագած 1*
16. *Արագած 2*
17. *Արագած 3*
18. *Արագած 4*
19. *Արագած 5*
20. *Ծաղկալանջ 1*
21. *Ծաղկալանջ 3*
22. *Ծաղկալանջ 4*
23. *Ծաղկալանջ 6*
24. *Արագածոտն 1*
25. *Արագածոտն 2*
26. *Արագածոտն 3*
27. *Արագածոտն 4*
28. *Շամիրամ 4*
29. *Շամիրամ 1*
30. *Շամիրամ 2*
31. *Շամիրամ*
32. *Արշալույս 1*
33. *Հայթաղ 1*



Նկ. 2. Աշտարակների բարձրությունների եռաչափ քարտեզը (կազմող՝ Լ. Մկրտչյան)



Նկ. 3. Արարատյան դաշտի եռաչափ քարտեզը՝ աշտարակների տարածությամբ (կազմող՝ Լ. Մկրտչյան)



Նկ. 4. Արդար Դավիթի հանույթն ու հատակագիծը (կազմող՝ Լ. Մկրտչյան)



Նկ. 5. Լեռնամերձ 2-ի օրթոֆոտոպլանը (կազմող՝ Լ. Մկրտչյան)

Լևոն Մկրտչյան

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Նկ. 6. Աղավնապուռ 1
(լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի)

Նկ. 7. Արշալույս 1 աշտարակը
(օդալուսանկարը՝ Լ. Մկրտչյանի)



Նկ. 8. Ուլաստրիտիկի տեղահանույթն ու հատակագիծը
(կազմող՝ Լ. Մկրտչյան)

Նկ. 9. Քարե կոռք Արդար Դավիթից (լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի)



Նկ. 10. Պարտիզակ 1, նորահայտ աշտարակը (լուսանկարը՝ Լ. Մկրտչյանի)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5